Վահան Տերյան

Ինչպես չըսիրեմ, երկիր իմ կիզված

Ինչպե՞ս չըսիրեմ, երկիր իմ կիզված,
Պարզված վերըստին սրերին սուրսայր.
Ինչպե՞ս չըսիրեմ հեզությամբ լցված
Դու յոթնապատիկ խոցված Տիրամայր:

Որքան որ ելան արյունիդ ագահ,
Դու կամավոր զոհ բոլորը տվիր.
Դու հավետ եղար անարատ վըկա
Չարերի կոխան, խաչված իմ երկիր:

Հրկեզ քո հոգին, որպես առատ խունկ,
Աշխարհի համար պարզեցիր անպարտ,
Հեզ ընդունեցիր երդում ու երկունք,
Դու արքայաբար վեհ ու անհպարտ:

Ժամ է, ե՛լ նորից, իմ ծիրանավառ,
Զրահավորվիր խանդով խնդագին,
Վառիր եիկունքի գիշերում խավար
Հրով մկրտված նահիրյան հոգին...